դպրանոցի Հոգաբաձութիւնը հրապարակաւ յայտնում է վերոյիշեալ Պ. Պ. Զաքար և Յովակիմ Գէորգեաններին իր խորին շնորհակալիքը։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

---

16 փետր. Իսահակ քահանայն Սարգսորապատ գեղջ Երևանայ գաւառի, որ կատարած էր Գէյչլուեցի Գեղամայ Տէր Ստեփանեանի պսակը առանց յայտարարութեան ծխատէր քահանայի և հրամանի գործակալին՝ ենթարկուեց ըստ հրամանի Սրբազան Սինօդի քսան և հինգ ռուբլի տուգանաց, յօգուտ Ճեմարանի Ս. Աթոռոյս, ի զգուշութիւն իւր և այլոց քահանայից, որ և հրամանագրուեց նորան դարձուցանել ստացած պսակագրամը ծխատէր քահանային։

---

28 Փետր. Բարեհաճութեամբ Նորին Վեհափառութեան Ս. Սինօդը փոխանորդ նշանակեց Ալեքսանդրապոլու՝ բարեշնորհ Գարեգին վարդապետ Սաթունեանցին, որ յառաջիկայ մարտի 1-ից ստանձնելու է իւր այդ նոր պաշտօնը։

---

28 Փետր. Բարեհաճութեամբ Նորին Վեհափառութեան Ս. Սինօդը փոխանորդ նշանակեց Նոր-Նախիջևան քաղաքին՝ բարեշնորհ Կիւրեղ վարդապետ Սրապեանցին և հրամանագրեց նորան մարտի 1-ից ստանձնել իւր այդ նոր պաշտօնը։

---

28 Փետր. ըստ կոնդակի Նորին Վեհափառութեան, փետր. 20, թ. 65, Ս. Սինօդը Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ վի-

ճակին սուժամանակեայ կառավարիչ նշանակեց բարեշնորհ Համազասպ վարդապետ Համազասպեանցին, հաղորդագրելով այս մասին յիշեալ վիճակի կոնսիստորեային։

—

5 Մարտ. Ս. Սինոդը թոյլատրեց Մողդոկ քաղաքի Ս. Ստեփաննոս եկեղեցու երիցփոխանին և ծխականաց նորոգել իրենց եկեղեցին ծախսելով եկեղեցական գումարից ըստ նախահաշուին՝ 1029 ր. 40 կ.

—

5 Մարտ. Ս. Սինոդը հրամանագրեց Տփխիսի կոնսիստորիային՝ Տաշքաշ գիւղի Դանիէլ քահանայ Տէր Գէորգեանցին վերատին ուղարկել Սևան յապաշխարութիւն։ Այս քահանայն իւր դայթակղեցուցիչ և յանդուգն վարուց համար ենթարկուած էր եռամեայ ապաշխարութեան և ինքնակամ հեռացել էր ապաշխարութեան տեղից։

—

5 Մարտ. ըստ կոնդակի Նորին Վեհափառութեան, յունուար 29, թ. 45, յանձնուեցան Ս. Սինոդից Մայր Աթոռոյս մատենադարանին հետևեալ ձեռագրերը.

ա) Մի օրինակ ձեռագիր կանոնագիրք, գրուած թղթի վերայ Հայոց ՌՃԳ թուականին. նուիրել է իսկական պետական խորհրդական պ. Սողոմոն Աւագեան Մելիք— Մեհրաբեանց։

բ) Մի օրինակ Աստուածաշունչ, գրուած մագաղաթի վերայ, Հայոց ՌՁԴ թուականին. նուիրել են հինգ եղբարք Մելիք Ստեփանեանք՝ պարոնայք Մամիկոն, Աւետիք, Արշակ, Լևոն և Միքայէլ։

գ) Մի օրինակ մեծադիր Աւետարան, գրուած մագաղաթի վերայ Հայոց ՇԶ թուականին։

դ) Մի օրինակ պատմութիւն Կաղանկատուացւոյ, գրուած թղթի վերայ Հայոց ՌՃԺԳ թուականին։

ե) Մի օրինակ պատմութիւն Մովսէսի Խորենացւոյ և Եղիշեայ, ամփոփուած մի գրքոյկ, գրուած թղթի վերայ, առանց

թուականին, բոլորագիր, գրչութեամբ Մարգարայ ուրուման՝ ըստ խնդրոյ Տէր Յովհաննու։

Այս վերջին երեք օրինակը նուիրել է շուշեցի Պ. Վահան Դատեանց։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տպար. ժողովս ըստ գրութեան Դեր. Մեսրովբ Արքեպիսկոպոսի, Վիճ. Առաջնորդի Հայոց Շամախւոյ, հրաւիրում է նոցա, որոնք ունին ուսուցչութեան արտօնութիւն, ձեռնադրուել քահանայ Մէյսարա գիւղի վերայ և վարել ուսուցչութեան պաշտօն նոյն գիւղում, ստանալով Բագուայ Մարդասիրական ընկերութիւնից տարեկան 300 րուբլի ռոճիկ, և թէ ժողովրդից զանազան հասոյթներ, թէ դրամական և թէ նիւթական որ առնուազն կհասնի 200 րուբլի. ընդամենն 500 րուբլի։

Յանկացողները կարող են դիմել Նորին Սրբազնութեան ի Շամախի, ներկայացնելով և իրենց ծննդական և ուսման վկայականները։

ՍԽԱԼԱՆՔ

Քաջբերունու «Ճանապ. նկատողութիւնք» աշխատութեան մէջ մտել են հետևեալ վրիպակները.

Արարատ, Մարտ 1889 թ. երես 182

					տպած է	Ուղիղ
					Շուլաւէրից	Շարուրից
Դեկտ.	1889.	երես	654	սուրբ	Կարապետի	սուրբ Նախավկայի
»	«	»	657		նոյնը	նոյնը
Յունվ.	1890.	երես	36		նոյնը	նոյնը
»	»	երես	41		»	»
»	»	»	42		»	»